



### 43. ԵԳՈՐԻ ԽԵԶԸԹԸ

Կար-չըկար, մե չասիք տղա կար, անունը՝ Եգոր: Էս Եգորը հառավոտ վեր էր Հըլնում, Էթում էր մե պատի տակ կայնում էր, չընի մե մարթ գալում էր, տանում բանցնում էր: Եգորը Փայլութունով հիր մորը պախում էր: Մե օր էլ մե մարթ էկավ, Եգորի խետ խոսաց օրը մե արասի հախ ու տարափ: Եգորը Հընգավ էս մարթի հետեկց ու գնաց:

Գացին, գացին, խասան մե ծովիր: Էստեղ նստան, խաց ձերան, դինջան, ետո էս մարթը Հելավ, ծոցից մե զիրք խանեց, բռնեց ձեռն ու ասսափ.—Եգո՛ր, բալա՛, հիմի ես էս գիրքը կըկարթամ, ծովը ետ կէթա, մե սար կերևս: Մեկ էլ, որ կարթամ, էս սարը կըճղվի, կըբաց-վի էրկու մասի: Դու կէթաս էտ ճղված տեղով: Որ խասնես ճղվուկի վերչը, ընդե քցուկ ա մե շամդամ, մե պատի դութի, մե ոսկե թաս: Էտ իրեքն էլ կըդնես ջերտ ու չուտ ետ կըդառնաս: Քո ճամբի վրեն դուս կըգան օցեր, կարիճներ, զանազան տեսակի գազաններ: Զըվախե-նաս: Ընդոնք չուշից են, հըմա չեղի դբան, կըհընգնեն կըփշրվեն: Գալու ժամանակ քո հետեկց շատ մարթ կըգոռա՝ «տարափ, տա-րափ», էլի չըգախենաս: Էտ մարթերն էլ չուշից են շինուկ: Կզան, որ չեղի բռնեն, չըգախենաս, հըմա դբան կըհընգնեն, կըփշրվեն: Խըան ճգան, գոռան, խանգարեն, ետ չըհիշկաս, հըմա հիշկացիր, սարը կը-ծասկվի, կըմնաս մեջ, էլ չես կանս դուս գա:

Եգորը անվախ տղա էր, խոսք տվեց կատարա: Էս մարթը սկսեց կարթալ: Կարթաց-կարթաց, ծովը ետ գնաց, մեկ ալ սկսեց կարթալ, սարը բացվավ, ճղվավ էրկու մասի: Եգորը վազափ: Գնաց խասավ ճղվուկի վերչը, տեսավ մե ջոչ մարաք: Քաշեց զողեն ջառթեց, տեսավ՝ էլի չի բացվում: Մեշկը տվեց ճիստեց, էլի չը-բացվափ: Դուռը բանցրցուց, ճիսանախան արափ ու ներս մտափ:

Տեսափ: Ի՞նչ տեսափ: Էլ ոսկի, էլ արծաթ, էլ մարքրիդ, էլ զմրուխտ, էլ չարուբար: Մե խոսկով, ինչ լիզուտ պտտա, կար: Եգո-րը բանի ձեռ չըտվեց, ման էկավ շամդամը, դութին ու թասը քթափ, իրեքն էլ դբեց ջերը:

Հըմա ուզեց մարաքից դուս գա, հետևից բոռացին.—Տարավ, խողածինը շամդամը, դութին ու թասը տարավ:

Կարիճներն հընգնում ին ոտների տակը, բանցրնում ին վզի վրեն, ուզում ին կծեն ու փշրվումին: Օցերը փաթթվում ին ոտներին, վզին, ջառթվում ին, թափում ին: Ձելերը, գազանները, ջուն-ջանավարները փեշերից ին քաշում: Եգորը վազնում էր, հետևը չէր հիշկում:

Մեշու էր մնացե, որ դուս գա պրծնի, վուազնալուց ոտը քարի կպավ, թափառս առավ, հընգավ, հիշկաց հետևը: Սարը էկավ, հիրար կպավ, եգորը մնաց մեշը: Եգորը նստավ, մնաց: Միթկ արավ, միթկ արավ ու հելավ գնաց մարաքի յանը:

Էս մարթը, որ կախարթ էր, տեսավ սարը փակվավ, էլի ծովը էկավ տեղը, եգորը մնաց սարի ու ծովի տակը, այս քաշեց ու հանգարց հերսից պաղուավ: Կախարթը եգորի դարդը չէր: Ախ էր քաշում շամդամի, դութու ու թասի խըմար: Իրեքն էլ ոսկուց ին, իրեքն էլ ամեն մեկը մե հունարի տեր:

Հիմի խաբարը տանք խեխն եգորից:

Գնաց մարաքի մեջ լիլիւալով ման էկավ, ոսկիքը, արծաթը, մարքրիզը հիրար խառնեց, ջարթըփչուր արավ, բիձին քռփեց, հըմա ինչ կաներ, որ աներ:

Եգորը իրեք օր անոթի-ծարավ նստավ, հետո վեր հելավ, ասավ. «Հայ, հայ: Անփող էլ անոթի մնամ, էսքան ոսկու ու արծաթի մեջն էլ անոթի մնամ: Բա հընչի՞ եմ սաղ մացե: Բա որ էս շամդամը, դութին, թասը մե չնորք չունեն, էն մարթը հընչի՞ բդի էսքան ոսկու, արծաթի ու թանգազին քարերի մեշը էս իրեքը բդի ուզեր: Էստե մե բան կա: Էհ, —ասում ա, —մե դութին բացեմ, տենամ մեշը ի՞նչ կա»:

Դութին որ չի բացում, մչից քառասուն հնգնավոր փայլեան են դուս գալում, չոմախները ձեռները բռնած, ասին.—Հը՛, եգո՛ր, ավիրե՞նք, քանդե՞նք, ի՞նչ անենք:

Եգորը մնաց շիվար:

Ասավ.—Ո՞նչ ավիրեք, ո՞նչ քանդեք, մեշու խաղացե՛ք, էլի մտեք դութին խանգստացե՛ք:

Ըստոնք չոմախները քաշին հընգան հիրար ջան, հիրար շիթ-մոռթ ջարթին, արին արնլվա, էլի էկան մտան դութին:

Ետո եգորը հինքն հիրան միթկ արավ.—Հընչի՞ էս փայլեան-ներից խաց չուզի:

Դութին բացեց, էլի փայլեանները բռուալով, գոռալով դուս էկան:

Ասին.—Հը՛, եգո՛ր, ավիրե՞նք, թե՞ քանդենք:

Եգորն ասավ.—Ո՞նչ ավիրեք, ո՞նչ էլ քանդեք, անոթի եմ, խա՛ց բերեք, ուտեմ: Յամաք խաց չըբերեք, հա՛մ, իշքան լավ բան կա, բերեք ուտեմ, իրեք օր ա, խաց չեմ ձերե:

Փայլւանները զացին խացի: Մեկը սիրտակ խաց էր բերում, մեկը՝ կարմրցրուկ խավ, մեկը՝ իշխան ձուկ, որ մեկն ասեմ, քառու տեսակ բան բերին լցին հառեցը: Ճերավ, ճերավ, փորն հելավ նաղարա: Եգորը նստավ, ուտում էր, փայլւաններն հիրար չիթը-մոռութին ջառթում:

Տեսավ հիրար կրսպանեն, նեղացավ, ասավ.—Գացեք մտե՛ք դութին:

Փայլւանները սուսրփուս մտան դութին:

Եգորը նստավ էլի ղանմազի պես միթկ արավ, թե իմալ դուս գա: Չի ֆայմում փայլւաններին ասա՝ ընձի լուս ախշարքը խանեք: Դես-դեն ման էկավ, ջուր քթավ. «Օ՞Փ,—ասավ,—ինչ լավ հելավ, զայթե ծարավ ի»: Թասը ջերից խանեց, ջուր լցեց, խմավ, տեսավ թասը ծանդրցավ: Զեռ տվեց, տեսավ թասի մեջը լինքը ուսկի փող ա:

—Փա՛րք չեղի, Աստվա՛ծ, ըստրա գաղտնիքն էլ հիմացա: Մնաց շամդամը,—ասավ,—մե շամդամն էլ փոռցեմ:

Դես պտտուց, դեն պտտուց, շամդամը բացվավ, մարաքը լուս-ցավ դառցավ չրաղվան:

Շամդամից դուս էկան մե նախիր մարթ:

Էլ դհոլ, էլ զուռնա, էլ նաղարա, էլ կլառնեթ, որ մեկն ասեմ, մե խառնիս արին, մե խառնիս արին, որ չուտես, չըխմես, թամաշա անես:

Տեսավ շատ բղի խաղան, ասավ. «Էկեք մտե՛ք շամդամը»:

Բոլորը վազան մտան շամդամը, բերանը փակեց, էլի մարաքը մթնավ:

Տեսավ մեկը էն յանից ձեն տվեց.—Վայ, ես մացի, վայ, ես մացի:

—Դու ո՞վ ես, որ մացիր,—ասավ Եգորը:

—Ես ըտոնց զուռնաչին եմ, ոտս ցավում էր, չըկառցա վազնեմ, մացի, դուռը բա՛ց, ես էլ մտնեմ:

Եգորը զուռնաչուն խացրեց.—Զուռնաչի՛ ախսեր, ի՞մալ անենք, որ էստեղից դուս գանք, ախսար մնացեր ենք ըստե, մառթի հերես չենք տենում, մե ճար բղի անես:

Զուռնաչին ասավ.—Ըտուց էլ հեշտ բա՞ն: Փայլւաններին ասա՛, թո դուս խանեն:

Եգորը դուռը բացեց, զուռնաչին մտավ ներս:

Դութին բացեց, ձեն տվեց.—Փայլւաններաշին մինակ դուս գա:

Փայլեանբաշին դուս էկավ, ասավ.—Հը, Եգո՛ր, ավիրե՞մ, թե՞  
քանդեմ:

—Ո՞նչ ավիրա, ո՞նչ քանդա, —ասավ Եգորը: —Դու կանա՞ս ըն-  
ձի խանես լուս ախշարքը:

—Հընչի՞ չեմ կանա, ըտուց հեշտ բա՞ն:

—Դե խա՞ն:

Փայլեանբաշին ասավ.—Հիմի քշեր ա, քնենք, հառավոտ լուսը  
բացվի, կըխանեմ:

Փայլեանը մտավ դութին, Եգորն էլ տեղվստեղը քնավ: Հա-  
ռավոտ, որ լուսը բացվավ, փայլեանները դութու ներսից սկսեցին  
թիւթիւկցնել: Եգորը զարթնավ, հելավ դութին բացեց, փայլեան-  
ները դուս էկան:

Եգորն ասավ.—Զըկովե՛ք, հա՛, խելո՛ք կացեք, թե չէ հըմմնիտ  
կըլցեմ դութին:

Փայլեանները խելոք կայնան:

Փայլեանբաշին ասավ.—Եգո՛ր, ինչ վերցնելու ենք, ասա՛ վերց-  
նեն ու դուս գանք:

Եգորն ասավ.—Բան հարգավոր չի: Մինակ դութին, շամդամն  
ու թասը տանենք, բոլ ա:

Էստեղ փայլեանբաշին Եգորին շկում ա, հիշնում ա հանդութ-  
քը: Հանդութքից թրա լուս ախշարքը ճամբա կար, էտ ճամբով  
դուզը դուս են գալում ու հըլնում երգի հերեսը: Հըմա խեխաները,  
ախշրքի էս ծերից դուս են գալում էն ծերը:

Փայլեանբաշին մտնում ա դութին, Եգորը դութին դնում ա ջերն  
ու էթում ա: Էթում ա, խասնում ա մե ջեղ: Դու մի ասա, էս երգի-  
րը հաջուջ-մաջուջի երգիրն ա: Գեղացիք որ տենում են էրկուո-  
տանի մարթ ա գալում, զառղաղի պեստ հաֆկում են, խեխանին  
չափում են: Մեկը քար ա քցում, մեկը չոմախով ա զանում, մեկը  
կմշտում ա, մեշու յա մնում, որ սպանեն:

Էստե միտն ա հընգնում դութին: Բացում ա, թե չէ, փայլեաննե-  
րը չոմախը ձեռներին դուս են գալում:

Ասում են. —Եգո՛ր, քանդե՞նք, թե՞ ավիրենք:

Եգորն ասում ա. —Զե՞ք տենում, էս շանվոռթի հաջուջ-մաջուջ-  
ներն ընձի ձերան, մե լավ տփե՛ք, հըմա չըսպանե՛ք, մեխսկ են:

Փայլեանները չոմախներն առան հընգան ըստոնց ջանը: Էնքան  
տվին, որ արնլվա արին: Հըմմեն փախան մտան հիրանց տները: Էս  
հաջուջ-մաջուջները չորս ոտ ունին, իրեք թև, մե խատ էլ ըշկ ճակ-  
տի հորթլաղը:

Տեսավ՝ խեխացան, ասավ.—Էկեք ձեզի խառնիս անեմ:

Հաֆկան չորս բոլորը:

Նամդամը բացեց: Զուռնաչիքը, դՀոլջիքը, դավալչիքը, նաղար-չիքը դուս էկան: Որ սկսին փչել, Էս հաջուջ-մաջուջներն էլ սկսեցին խաղալ: Էնքան խաղացին, թուլցան:

Տեսավ՝ հոքնան, հիրա շամդամի դաստին ասավ.—Եկեք մտե՛ք շամդամը, դինջացե՛ք:

Հրմմեն էկան մտան շամդամը, հաջուջ-մաջուջներն էլ գացին հիրանց տները:

Էստեղ փայլսանբաշուն ասավ.—Ընձի բղի տանես մեր երգիրը: Փայլսանբաշին ասավ՝ աշկիս վրեն:

Եզորին չկեց: Մովերը, ցամաքները իրեք օրվա մեջ կդրեց, էկավ խասավ եզորենց երգիրը:

Եզորը գնաց հիրանց տուն, տեսավ մերը էնքան ալացե, աշկերն ուուեր են, անոթի թուլցեր ա, հընդեր ա:

Մերը որ տեսավ եզորն էկավ, հելավ նստավ:

Եզորը փայլսաններին ասավ մե սեղան բացին, նստան կուշտ ձերան, ուրիսցան:

Եզորը թասը ջուր էր լցում, դառտկում, դառնում էր ոսկի: Գնաց թաքավորի քաղաքը, մե պալատ չինեց ու մորը տարավ քաղաք:

Օրերից մե օր գնաց ճաշարանը: Զուր ուզեց:

Զուրը բերին, լցեց հիր թասը, խմավ, զուր բերողը տեսավ թասը լինքը ոսկի լցվավ:

Վաղավ, գնաց թաքավորի ախճկան ասավ.—Այ թաքավորի ախճկի, բա չես ասի, ըստե մե տղա մե թաս ունի, ջուրը լցում են մեչը, ոսկի յա դառնում:

Թաքավորի ախճիկը ըսհավատաց, ասավ, որ սուժ հըլնի, գլոխտ թոցնել կրտամ: Գացին էս տղին բերին թաքավորի պալատը:

Ճերան, խման, հիրկոն էլ տեղ քցին էս տղեն քնավ:

Որ քնավ, մոտից թասը զոխծան, հիրանն էլ յորդան-դոշկով վիրի հարգի ակուշկից քցին: Եզորը զանթնավ, տեսավ՝ հինքը քուչի մեջը հընդուկ ա: Զեռ տվեց ջերը, տեսավ դութին ու շամդամը տեղն են, թասը ըշկա:

—Լա՛վ, —ասավ,—հըլը թո լուսը բացվի, ես ձեր հախից կրգամ:

Լուսը որ բացվում ա, ախճիկը վերցում ա ոսկե թասը ու գալում ա խոր մոտը, խորը նշանց ա տալում ա, ջուր ա լցում, ոսկի յա դառտկում:

Թաքավորը զարմանում ա, ասում ա.—Էս հո՞ւստ ես բերե էս տեսակ զարմանելի բանը:

Ախճիկը խորը պատմում ա, ինչ որ արել էր տղի գլոխը. Թաքա-վորն հարմայում ա՝ հուր էլ հըլնի, տղին քթնեն բերեն: Էս տեսակ բան ունեցողի մոտ հուրիշ բան էլ գըլնի:

Թաքավորի նոքաներն էթում են, Եգորին քթնում են, տենում են՝ հեսա տանը արխային քնուկ ա:

Բերում են թաքավորի մոտը: Եգորն հինքն ա բողոքում, որ թաքավորի ախճիկը էտ տեսակ նամարդ բան արավ, զոնախ կանչեց, թալնեց, քնուկ տեղն էլ ակուշկից քցեց, մեշու մնաց մեռներ: Թաքավորը հրամայում ա Եգորին մե լավ տփեն, որ թաքավորի ախճկա վրա համացակվում ա բողոք անա:

Էլ Եգորը չի համփերում ա, զութու բերանը բացում ա ու ասում ա. —Փայլսաններ՝, թաքավորին էլ, ախճկան էլ, վազիր վաքլին էլ, սինոթներին էլ մե լավ տվեք: Քանի չեմ ասե՛ բոլ ա, տվե՛ք, կողները ջնչխե՛ք:

Բարի լուսը բացվի ձեր վրեն, սևուսուքը ըստոնց վրեն:

Տվին, տվին, էնենց տուր տվին, ջանները վրները քրքրին:

Ըստե թաքավորն ասում ա. —Տղա՛, գլխիտ, արևիտ զուրբան, մեզի ազատա՛, քո թասն էլ կըտանք, ինչ ուզում ես, կըտանք:

Եգորը փայլսաններին ասում ա՛ կայնե՛ք:

Փայլսանները չոմախները ձեռներին պաղբաստ կայնում են:

Թաքավորը թասը բերել ա տալում, հրմա մթկի մեչը ասում ա. —Յավաշ, մե զորքը կանչեմ, քո հախից կըդամ:

Գոխտուկ զորք ա կանչում: Թրով, թվանքով գալում են ու փայլսաններին առնում օրթլազ: Փայլսանները կատղում են, հընգնում են զորքի մեչը, զորքին էն օրն են քցում, որ Աստված ետ եռու տանա:

Թաքավորը հընգնում ա տղի ոտները, ասում ա. —Տղա՛, ես արի, դու մի՛ արա:

Եգորը կարքաղրում ա փայլսաններին կովին վեռչ տան: Փայլսանները կովին վեռչ են տալում:

Տղեն ասում ա. —Թաքավո՛րն ապրած կենա, հիմի բղի խառնիս անեմ:

Թաքավորը մթկի մեչը ուրինում ա, ասում ա. «Էս լավ հելավ, ախճկաս կառնի, կըդառնա ընձի փեսա»:

Եգորը բերել ա տալում թաքավորի ախճկան:

Հրամայում ա բերեն թաքավորի չաչալ դազարածին:

Եգորը դազարածին ասում ա. —Դե չե տենամ, դազարա՛ծ, չեզի պսակում եմ թաքավորի ախճկա խետ:

Ասում ա ու շամդամը բացում ա: Տասը տեղով դհոլ-զուռնա յա սկսվում: Թաքավորի ախճիկը չի ուզում ա: Փայլսանքաշին մազերից բոնում ա մեշտեղ ա քաշում:

Խառնիսն անում են, դազարածին հարուր թաս ուսկի յա տալում, ասում ա. —Դե զնա աբրի՛:

Թաքավորին էլ թախտից քցում ա, հինքն ա դառնում թաքավոր:

Հտուց հետո մորը առոք-փառոք բերում ա պալատը, դառցնում ա պալատի կնանիքի մեծը:

Եգորը պսակվում ա մե լավ ախճկա խետ: Սաղ ժողովրթին կանչում ա խառնիս: Թասը բերում ա մեյդան:

Ուտում են, խմում: Թասը օչերեղով բոլորի ձեռների մեջ պտտում ա, զինին խմում են, թասը լինքը ոսկի յա լցվում:

Ոսկին խմողին ա: Յոթ օր, յոթը զիշեր խառնիս են անում: Բոլորն էլ մեկ-մեկ թաս ոսկի են տանում:

Հստոնք խասան հիրանց մուրազին, դուք էլ խասնեք ձեր մուրազին: Երգնքից իրեք խատ խնձոր հընգավ, էն էլ մեր էրեխեքին:

